«ԿԱՊԱՆԻ №2 ԱՎԱԳ ԴՊՀՈՑ» ՊՈԱԿ/ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Համագործակցային ուսուցումը աշխարհագրության դասավանդման ընթացքում
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ	Սյունիքի մարզ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	Մարտիրոսյան Մերի
ՈՒՍՈՒՑԻՉ	Մանուկյան Բուրաստան
ԱՌԱՐԿԱ	Աշխարհագրություն
ԴՊՐՈՑ	Ագարակի միջնակարգ դպրոց

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 4

1.1 Աշխարհագրության դասավանդման մեթոդները.....5

1.2 Համագործակցային ուսուցման հիմնական տարրերը 8

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ.....10

2.2 Համագործակցային մեթոդները որպես ուսուցման արդյունավետության խթան..... 11

2.3 Փորձարարական մաս 15

2.3.1 Փորձարարական դաս 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով: Մեթոդների ընտրությունը կապված է բազմաթիվ խնդիրների ու նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Այսպիսով ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել համագործակցային մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում:

Նպատակից բխող խնդիրներն են՝

- Պարզել համագործակցային մեթոդների էությունը և տեսակները:
- Բացահայտել համագործակցային ուսուցման հիմնական տարրերը:
- Պարզել համագործակցային մեթոդների դերն ու նշանակությունը:

§ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխարհագրությունը (հունարեն՝ Γεωγραφία (գեոգրաֆիա), նշանակում է նկարագրել, գրել կամ պատկերագրել), երկրի մասին գիտությունների համակարգ, որն ուսումնասիրում է բնական և արտադրական տարածքային համալիրների ձևավորման և զարգացման օրինաչափությունները: Աշխարհագրության ժամանակակից հետազոտության օբյեկտը միասնական երկրոլորտն է:

Աշխարհագրական հետազոտություններով զբաղվում է ֆիզիկական աշխարհագրությունը և տնտեսական աշխարհագրությունը: Ինչպես յուրաքանչյուր առարկա, աշխարհագրությունը ևս ունի դասավանդման մեթոդիկայի իր առանձնահատկությունները:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է կիրառվող մեթոդներով: «Մեթոդը» բառը ունի հունական ծագում, որը նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ:

Ուսուցման մեթոդները լինելով բավական ուսումնասիրված՝ դեռևս չունեն մեկ ընդհանուր համապարփակ սահմանում: Սակայն կարելի է հիշատակել ստորև ներկայացված բնութագրումները՝

1. Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի միասնական աշխատանքն են, որով իրականացվում են կրթական նպատակները, այսինքն՝ համատեղ գործունեությունն են, որոնց արդյունքում սովորողը ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ինչպես նաև ձևավորվում են նրա աշխարհայացքը և ճանաչողությունը [6]:
2. Ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի փոխկապակցված գործունեությունն են, որոնք կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրների իրականացման նպատակ ունեն [5]:
3. Ուսուցման մեթոդները ուսուցչի ուսուցանող գործունեության եղանակներն են և սովորողների ուսումնաճանաչողական գործունեության կազմակերպումն են որոշակի դիդակտիկական խնդիրներ լուծելու նպատակով, որոնք ապահովում են Ուսումասիրվող նյութի յուրացումը [7]:

4. Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողների հաջորդական և փոխկապակցված գործողությունների համակարգն են, որոնց շնորհիվ սովորողները յուրացնում են կրթության բովանդակային նյութը, զարգանում են նրանց մտավոր որակները և կարողությունները, ինչպես նաև տիրապետում են ինքնակրթության և ինքնուրույն սովորելու միջոցները [7]:

Չնայած դիդակտների տված տարբեր սահմանումներին՝ կա մեկ որոշակի ընդհանուրություն, որ հանդիպում է գրեթե բոլոր հեղինակների մոտ, այն է՝ ուսուցման մեթոդները մանկավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են՝ ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով:

Այսպիսով, եթե խոսքը վերաբերում է միայն ուսուցչի գործունեությանը, ապա տեղին է խոսել դասավանդման մեթոդների, իսկ եթե միայն սովորողի գործունեությանն է վերաբերում, ապա՝ ուսանելու մեթոդների մասին:

Ուսուցման երկկողմ միասնությունն արտահայտելով հանդերձ՝ մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նկարագրում ունեցող փոխկապակցված գործունեությունը: Ուսուցման մեթոդի էությունը դիտարկվում է որպես դասավանդման եղանակների համակարգ, որն ապահովում է սովորողների ուսումնաճանաչողական գործունեության մանկավարժորեն նպատակադրված կազմակերպումը:

1.1 Աշխարհագրության դասավանդման մեթոդները

Օրեցօր զարգացող դինամիկ աշխարհում, հնարավոր չէ գտնել մեկ ընդհանրական մեթոդ, որն ի զորու կլինի լուծելու ուսուցման առջև ծառացած բոլոր խնդիրները, քանի որ անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին ադապտանալու և համապատասխան լուծումներ գտնելու համար հարկավոր է համադրել ավանդական և ժամանակակից մեթոդները՝ դասավանդման ընթացքում լավագույն արդյունք ունենալու համար:

Համագործակցային ուսուցումը լայն կիրառություն ունի աշխարհում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները սկիզբ են առնում Ջոն

Դյուիի աշխատություններից, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողավրդավարական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու հնարավորություն է տալիս [3]:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ըստ կիրառման եղանակի, ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Այդ պատճառով էլ այս տեխնոլոգիան ունի կիրառման լայն շրջանակ:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության նրկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքինները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում

է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Գծագիր 1. Համագործակցային ուսուցման հիմնական հատկանիշները[1]



Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

[1] D. Johnson, R. Johnson, E. Holubec, 1994, էջ 4

1.2 Համագործակցային ուսուցման հիմնական տարրերը

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը:

Գծագիր 2. Համագործակցային ուսուցման հիմնական տարրերը[2]

Դրական փոխկախվածություն

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումը: Փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով:

1. **Մրցակցային,** երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ:

[2] D. Johnson, R. Johnson, E. Holubec. 1994, էջ 26

2. **Անհատական,** երբ խմբի անդամները առկախվում են խմբակիցներից և յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը:
3. **Համագործակցային,** երբ խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Դրական փոխկախվածությունը այն զգացումն է , որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հաջողության հասնել միայնակ: Կարելի է ասել, որ դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման «սիրտն» է:

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ /հետերոգեն/ խմբեր են, որոնց անշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանաներում: Այս խմբերի անդամները աջակցում, օգնում և խրախուսում են՝ նպաստելով առաջադրանքի կատամանը և գիտելիքների ձեռբերմանը: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, տնային հանձնարարությունները կատերելու հարցում օգնելը և այլն: Դրանք մշտական են/ գործում են մեկից մի քանի տարի/ և ապահովում են երկարաժամկետ, հոգատար, գործընկերային փոխհարաբերություններ: Խմբերը անց են կացնում պաշտոնական հանդիպումներ՝ յուրաքանչյուր անդամի ակադեմիական առաջընթացը քննարկելու, միմյանց աջակցություն և օգնություն տրամադրելո համար, ինչպես նաև համոզվելու, որ յուրաքանչյուր անդամ կատարում է հանձնարարությունները և ունի բավարար առաջընթաց ակադեմիական ծրագրի շրջանակներում: Ոչ պաշտոնապես անդամները համագործակցում են ամեն օր՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննակում են հաձնարարությունները և օգնում միմյաց՝ կատարել տնային աշխատանքները: Հենակետային խմբերն ունեն անձնական պատասխանատվություն՝ լսել և սատարել խմբի անդամին, երբ վերջինս ունի անձնական բնույթի խնդիրները: Որքան մեծ է դասարանը կամ դպրոցը և բարդ ու դժվարին առարկան, այնքան ավելի կարևոր է հենակետային խմբեր ունենալը:

Համագածակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների /համագործակցային հմտություններ կիրառողներ/ և գիտելիքների ակտիվ կիրառողներ / մտածողության հմտություններ կիրառողներ/ ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում

է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը /ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը/:

Համագործակցային ուսման կազմակերպումը

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ:

2.2 Համագործակցային մեթոդները որպես ուսուցման արդյունավետության խթան

1. Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն) [1]:

Համագործակցային մեթոդների անվանման հիմքը համագործակցել բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում՝ ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ է տալիս: Հետագայում ավելի տարածվեց ինտերակտիվ մեթոդներ բառակապակցությունը, որը ներառում էր

վերոհիշյալ հնարավորություններով դրսևորող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է, մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ [2]:

Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկն այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշկերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարներ ու մեթեդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման ընդհանուր մոտեցումների մշակման համար:

2. Այս մեթոդների կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքների պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա [4]:

   Մեթոդների կիրառումը նպաստում է՝

   - Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
   - կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավմանը,
   - ինքնագործունեության խթանմանը,
   - ճանաչողական գործընթացների խթանմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
   - ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
   - ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
   - Աշակերտի անհատական հաղորդակցական–զգայական ոլորտի զարգացմանը,
   - ուսումնական դրական խթանի զարգացմանը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Համագործակցային ուսուցման մեթոդներն են [3]՝

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակել է Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը խթան է հանդիսանում ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունավետության բարձրացման գործում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն ընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը կիրառելիս գնահատվում է , թե՛ առանձին աշակերտը և թե՛ խումբը:

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Օրինակ՝ աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբի տալ դասի մեկ հատված և որոշակի ժամանակ: Ձևավորվում են փորձագիտական խմբերը:Փորձագիտական խմբերում տրված հատվածը յուրացնելուց հետ աշակերտները վերադառնում են հենակետային խմբերը: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր թեման խմբի անդամներին: Արդյունքում նյութը յուրացնում են բոլոր աշակերտները:

Շրջագայություն պատկերասրահում: Սա “Խճանկար” մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և

ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են խմբերով մեկ թեմայի շուրջ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխոգնության վրա: Խմբային հետազոտության մեթոդի հեղինակը պրոֆեսոր Շարոնն է, սակայն այս մեթոդի ակունքները հանդիպում են Ջոն Դյուիի տեսության մեջ: Այս մեթոդը կիրառելիս աշակերտները սովորում են համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը: Աշակերտները խորությամբ են յուրացնում տրված նյութի բովանդակությունը և սովորում են համագործակցել հետազոտելու ընթացքում:Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգանում է համագործակցային աշխատանքի հմտությունները:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

գնահատում:

2.3 Փորձարարական մաս

Խմբի նկարագիրը

Սույն աշխատանքում ներկայացված է համագործակցային մեթոդներով և փոքր աշխատանքային խմբերով դասի անցկացումը: Համագործակցային մեթոդների կիրառումը ուղղված են սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրունության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:

Այսպիսով, սույն աշխատանքի նպատակն է աշխարհագրության դասաժամերին, համագործակցային ուսուցման մեթոդի կիրառությամբ աշակերտների շրջանում ձևավորել այնպիսի որակներ, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք համահունչ կլինեն կրթության ժամանակակից պահանջներին, իսկ շրջանավարտը՝ կրթական հաստատությունում ձեռք բերածը կկարողանա կիրառել կյանքում:

Ստորև ներկայացված է կոնկրետ դասի օրինակով՝ բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությունը և որքանո՞վ է առաջադրված փորձը նպաստելու վերը նշված հմտությունների զարգացմանը:

Ընտրել եմ 9-րդ դասարանը:

Դասի թեման՝ Հայկական լեռնաշխարհը / ամփոփիչ դաս/:

Հայենիքի աշխարհագրության իմացությունը նույնքան անհրաժեշտ է, որքան մայրենի լեզվի,հայրենի երկրի պատմության ու մշակույթի իմացությունը: Միայն

ճանաչելով դուք կգնահատեք Հայաստանը մեր միակ հայենիքը, հականալով կսիրեք այն,կզգաք ձեզ նրա իսկական տերը և կնվիրվեք նրա բարգավաճման վեհ նպատակին:

Այս նախաբանով սկսվեց դասը:

2.3.1 Փորձարարական դաս

Ամսաթիվ – 15.09.2023թ.

Դասարան-9

Թեմա-Ամփոփիչ դաս՝ Հայկական լեռնաշխարհ

Անհրաժեշտ նյութերը-պաստառներ խմբային աշխատանքի համար, մարկեր, քարտեզ

Կիրառվող մեթոդները–համագործակցային խմբային աշխատանք, հարց ու պատասխան

Նպատակ՝

1. Ճանաչել Հայկական լեռնաշխարհը

Ընդլայնել, ամրապնդել և խորացնել գիտելիքները թեմայի վերաբերյալ

2. Արժեքային համակարգ
   - ♦ Ճանաչի իր հայենիքը, լինի հարենասեր,
   - ♦ Ժամանակակից աշխարհում, մեզ հարող տարածաշրջանում գիտակցի հայոց պետականության դերն ու նշանակությունը,
   - ♦ Ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն

Միջառարկայական կապերը-

Պատմություն-կարողանա ներկայացնել Հայկական լեռնաշխարհի հետազոտման պատմությունից, ներկայացնեն պատմական նշանավոր իրադարձություններ

Գրականություն-Հայաստանի վերաբերյալ նշանավոր մարդկանց ասույթները /Ստրաբոն, Հերոդոտոս, Ջ.Գ. Բայրոնը և այլն/

Մաթեմատիկա- կարողանան հաշվարկներով կատարել բնագիտություն, ֆիզիկական աշխարհագրություն և այլն:

Ակնկալվող վերջնարդյունքը

- ➔ Ներկայացնել Հայկական լեռնաշխարհի դիրքի, բնական պայմանների և կլիմայի առանձնահատկությունները, թվարկի մակերևույթի, ջրագրակն ցանցի գլխավոր օբյեկտները, իմանա վերընթաց գոտիները,օգտակար հանածոները:
- ➔ Կարողանան քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի բոլոր աշխարհագրական միավորները/ լեռները, գետերը, լճերը և միջլեռնային գոգացվորությունները/:

Կազմակերպչական մաս- / 5 րոպե/

- Նախորոք կահավորել դասասենյակը խմբային աշխատանքի համար
- Կազմել ըստ գույների 5 խումբ
- Խմբերը ընտրում են առաջադրանքները և սեղանի համարը

Խթանում–/2-3 րոպե/ հարց ու պատասխանի միջոցով հիշել գլխավոր հասկացությունները

Իմաստի ընկալում-/15 րոպե/

Խմբային աշխատանք

Դասարանը բաժանվում է 5 խմբի, ընտրվում են հանձնարարությունները՝

I. խումբ-Հայկական լեռնաշխարհի մակերևույթի ձևերը /ծալքաբեկորային, հրաբխային և միջլեռնային գոգավորությունները/
II. խումբ-Կլիմայի առանձնահատկությունները
III. խումբ–Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները /սահմանները, մակրոդիրքը, մեզոդիրքը/
IV. խումբ-Վերընթաց գոտիականություն /հողի տիպ, բուսական և կենդանական աշխարհ/
V. խումբ-Հայկական լեռնաշխարհի գետերը և լճերը:

Կշռադատման փուլ –/15րոպե/

Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքը, մյուսները լսում են և նախապես կազմված ռուբրիկի միջոցով կատարում գնահատում. գնահատում կատարվում է նաև խմբի ներսում:

Վերջում ուսուցիչը անդրադարձ է կատարում նկատված թերություններին և կատարում համապատասխան մեկնաբանություններ:

Վերջնական գնահատումը իրականացվում է խմբային և անհատական գնահատումների վերլուծության հիման վրա;

Տնային աշխատանք- Պատրաստվել թեմատիկ գրավոր աշխատանքի: Արդյունքները փորձենք ներկայացնել դիագրամներով.

ա/ խմբերի արդյունքները

բ/ անհատական արդյունքները

Խմբային աշխատանքներում ամենաբարձր միավորը 12-ն է, ամենացածրը՝ 4-ը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի իրականացման արդյունքում հանգեցինք ստորև ներկայացված եզրահանգումներին՝

- համագործակցային մեթոդները սովորողների ինքնուրույնության, շարժառիթների իրականացման լավագույն ձևն են: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել: Այն ապահովում է սովորողների ճանաչողական գործընթացների (խոսք, հիշողություն, մտածողություն) և սովորողների անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացմանը:
- Համագործակցային մեթոդները իրենց կարևոր տեղն ունեն տարրական դպրոցում, որոնց կիրառությունը նպաստում է կրտսեր դպրոցականների անձի սոցիալականացմանը և ինտեգրմանը հասարակության մեջ:
- Համագործակցային ուսուցման հիմնական տարրերի բացահայտումը և կիրառումը հիմնավորեց համագործակցային միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը, որն օգնում է ուսուցչին բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:
- Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտեցինք, որ ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համալիրի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդում, այլև խթանում է սովորողների ինքնուրույնությունը, ակտիվ ճանաչողական և տրամաբանական գործընթացները:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններրից մեկը ուսուցման նորագույն փոխներգործուն մեթոդներին տիրապետելն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան Ս.Գ., «Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը», Գյումրի, 2006, էջ 96
2. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., «Համագործակցային ուսուցում», Երևան, “Անտարես” հրատ., 2006,էջ 117
3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Երևան, 2005, 402 էջ
4. Վինցե Սաբո, Ադամ Մերենյի Աթիլլա Տակաչ, «101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար», Բուդապեշտ, 2006
5. Бабанский,Ю.К. Избранные педагогические труды / Ю.К. Бабанский, М.Ю. Бабанский. – Москва : Педагогика, 1989. – 560 с.
6. Данилов М. А. и др. Дидактика / Б. П. Есипов, М. А. Данилов, М. Н. Скаткин, Э. И. Моносзон, С. М. Шабалов; под ред. Б. П. Есипова; Акад. пед. наук РСФСР. Ин-т теории и истории педагогики. М.: 1957.-517с.
7. Харламов, И.Ф. Педагогика : учебное пособие / И.Ф. Харламов. – Издание 4-е, переработанное и дополненное. – Москва : Гардарики, 2007. – 519 с.